

DAILY READINGS		
J U L Y	20	Exodus 19:9-13; 2 Kings 2:9-12; 1 John 5:9-12; John 1: 1-17
	21	Exodus 19:16-20; 1 Kings 19:11-16; Hebrews 12:18-27; Luke 9:27-36
	22	1 Corinthians 1:1-8; Matthew 17:21-18:4
	23	<b>Prophet Isaiah</b> Isaiah 6:1-10; Hebrews 11:32-40; Luke 4:14-23
	24	1 Corinthians 1:10-18; Matthew 18:2-9
	25	<b>The Holy Apostle Thaddeus (Jude) and St. Santookhd the virgin</b> Wisdom 1:1-7; Jeremiah 16:16-21; 1 Corinthians 1:25-30; Matthew 18:10-14



Today the Armenian Church observes one of its five major feasts, the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ ( Aylakerputium / Vartavar ). This Feast is observed fourteen weeks after Easter, and therefore can fall between June 28 and August 1. It commemorates an episode in the New Testament recorded by Matthew, Mark, Luke, and Peter, recalling Christ's ascent up Mount Tabor with disciples John, James, and Peter.

ՅՈՐ

In consideration of the current health crisis we ask all parishioners to put on their masks prior to entering the building and keep it on the entire time they are in the building. Also, there will be no Fellowship Hour taking place after church service until further notice.

Thank you



**St. Sarkis Armenian Apostolic Church**

July 19, 2020

**Vartavar**

Feast of Transfiguration of Our Lord  
Հոգեգալուստեն ետք Վեցերորդ Կիրակի

Morning Service 9:15 am Divine Liturgy 10:00 am

Տ. Հրանդ Բհնյ. Գեորգեան, Հովի  
Rev. Fr. Hrant Kevorkian, Pastor

19300 Ford Road, Dearborn, MI 48128  
Phone: 313.336.6200

Church e-mail address: [office@saintsarkis.org](mailto:office@saintsarkis.org)  
St. Sarkis website: [www.saintsarkis.org](http://www.saintsarkis.org)

After hours or in case of emergency please contact Father Hrant on his cell phone 857.318.9799.

**Յովհաննես Առաքեալի Ընդհանրական Առաջին Նամակէն (1:1-7)**

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքի մասին, որ Հօրը Հետ էր եւ այժմ՝ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դատնաք այն Հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդին՝ Յիսուս Քրիստոսի Հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը, որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է թէ Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք՝ «Հաղորդակից ենք իրեն», եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր: Իսկ եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն աստէն ճշմարտապէս Հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ մեր մեղքերէն:

**The Holy Gospel According to John 1:1-7**

**The Word became Flesh**

In the beginning was the Word, and the Word was with God, and the Word was God. He was in the beginning with God. All things came into being through him, and without him not one thing came into being. What has come into being in him was life, and the life was the light of all people. The light shines in the darkness, and the darkness did not overcome it.

There was a man sent from God, whose name was John. He came as a witness to testify to the light, so that all might believe through him.



<b>Upcoming liturgical calendar</b>	
July 19	Վարդավառ - Տօն Այլակերպութեան - Feast of Transfiguration.
August 16	Վերափոխում Ա. Աստուածածնի - Feast of the Assumption of the Holy Mother of God.
Sep. 8	Ծնունդ Ա. Աստուածածնի - Birth of the Holy Mother of God.
Sep. 13	Խաչվերաց - Exaltation of the Holy Cross.
Sep. 26	Ս. Գեորգ - St. George
Sep. 27	Վարագայ Ս. Խաչ - Holy Cross of Varak
Oct. 10	Ս. Թարգմանիչ Վարդապետներ - Holy Translators
Oct. 17	Ս. Աւետարանիչներ - Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս - Holy Evangelists - Matthew, Mark, Luke, and John
Oct. 19	Ս. Յովսէփ - Saint Joseph
Oct. 25	Գիւտ Խաչի - Discovery of the Cross
Oct. 31	Տօն Ամենայն Սրբոց - Feast of All Saints
Nov. 28	Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս - Sts. Thaddeaus and Bartholomew

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն առ Մատթեոսի (16:13-17:13)**

After six days Jesus took with Him Peter, James and John the brother of James, and led them up a high mountain by themselves. There He was transfigured before them. His face shone like the sun, and His clothes became as white as the light. Just then there appeared before them Moses and Elijah, talking with Jesus.

Peter said to Jesus, "Lord, it is good for us to be here. If you wish, I will put up three shelters—one for You, one for Moses and one for Elijah."

While he was still speaking, a bright cloud covered them, and a voice from the cloud said, "This is my Son, whom I love; with Him I am well pleased. Listen to Him!"

When the disciples heard this, they fell facedown to the ground, terrified. But Jesus came and touched them. "Get up," He said. "Don't be afraid." When they looked up, they saw no one except Jesus.

As they were coming down the mountain, Jesus instructed them, "Don't tell anyone what you have seen, until the Son of Man has been raised from the dead."

The disciples asked Him, "Why then do the teachers of the law say that Elijah must come first?"

Jesus replied, "To be sure, Elijah comes and will restore all things. But I tell you, Elijah has already come, and they did not recognize him, but have done to him everything they wished. In the same way the Son of Man is going to suffer at their hands." Then the disciples understood that He was talking to them about John the Baptist.



Երբ Յիսուս Փիլիպպոսի կառուցած Կեսարիայի կողմերը եկաւ, իր աշակերտներուն Հարցուց.

-Մարդիկ ի՞նչ կ'ըսեն Մարդու Որդիին մասին. ո՞վ եմ ես:

Անոնք պատասխանեցին. Ոմանք քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք՝ Եղիա մարգարեն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը:

Յիսուս Հարցուց անոնց. -Իսկ դո՞ւք ով կը կարծէք զիս:

Միմն Պետրոս պատասխանեց. -Դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին:

Յիսուս ըսաւ անոր.

-Երանի քեզի, Միմն, Յովնանի որդի, որովհետեւ ասիկա քեզի յայտնողը մարդ մը չէր, այլ իմ Հայրս, որ երկնքի մէջ է: Քեզի կ'ըսեմ՝ թէ Ժայռ ես դուն, եւ այդ Ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, զոր մահն անգամ իր ամբողջ զօրովմեամբ պիտի չկրնայ յաղթահարել: Քեզի պիտի տամ երկնքի արքայութեան բանալիները, եւ ինչ որ կապես երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկնքի մէջ, եւ ինչ որ արձակես երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկնքի մէջ:

Ապա Յիսուս խօսիւ պատուիրեց իր աշակերտներուն, որ ոեւէ մէկուն չըսեն թէ ինքն է Քրիստոսը:

Այս դէպքն ետք, Յիսուս սկսաւ յայտնել իր աշակերտներուն, թէ պետք է որ ինք Երուսաղէմ երթայ, ուր շատ պիտի չարչարուի աւագ քահանաներէն, Օրէնքի ուսուցիչներէն եւ երեցներէն, թէ պետք է որ սպաննուի, եւ երրորդ օրը յարուցիւն առնէ:

Ասոր վրայ Պետրոս զինք մէկ կողմ տարաւ եւ սկսաւ Հակառակելով վիճիլ.

-Քաւ լիցի, Տէր, այդպիսի բան թող չպատահի քեզի:

Յիսուս Պետրոսի դառնալով ըսաւ.

-Ետիս գնա, Սատանայ, դուն արգելք ես ինձի, որովհետեւ Աստուծոյ ծրագիրը չէ որ կը խորհիս, այլ մարդոց մտահոգութիւնը կ'արտայայտես:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

-Եթէ մէկը ուզէ ինձի Հետեիլ՝ թող սբանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ով որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ ինձի Համար կորսնցնէ իր կեանքը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր

կեանքը կորսնցնէ, որովհետեւ ի՞նչ փրկագին պիտի տայ իր կեանքը եւ առնելու համար: Արդարեւ, Մարդու Որդին պիտի գայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հասուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ Հոս գանտողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կուգայ իր թագաւորութեամբ:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները ըյտի նման ճերմակ եղան: Եւ ահա երեցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

-Տէր, ինչ լաւ է Հոս. եթէ կ'ուզես՝ երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր.

-Այս է եւ՛ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ. անոր մտիկ ըրէք:

Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափաւոր՝ երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով դպաւ անոնց եւ ըսաւ.

-Ուրբի եղէք, մի վախնաք:

Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ զատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ըսելով.

-Մինչեւ որ Մարդու Որդին մեռե՛լներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի պատմէք:

Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի.

-Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ՛ նախ Եղիան պէտք է գայ: Յիսուս պատասխանեց.

-Ճիշդ է, Եղիան նախ գալով պիտի պատրաստէ ամէն ինչ. բայց գիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ Մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ:

Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան:

## The Gospel of Jesus Christ according to Matthew 16:13-17:13

When Jesus came to the region of Caesarea Philippi, He asked His disciples, "Who do people say the Son of Man is?" They replied, "Some say John the Baptist; others say Elijah; and still others, Jeremiah or one of the prophets."

"But what about you?" He asked. "Who do you say I am?" Simon Peter answered, "You are the Messiah, the Son of the living God."

Jesus replied, "Blessed are you, Simon son of Jonah, for this was not revealed to you by flesh and blood, but by My Father in heaven. And I tell you that you are Peter, and on this rock I will build My church, and the gates of Hades will not overcome it. I will give you the keys of the kingdom of heaven; whatever you bind on earth will be bound in heaven, and whatever you loose on earth will be loosed in heaven." Then He ordered His disciples not to tell anyone that He was the Messiah.

From that time on Jesus began to explain to His disciples that He must go to Jerusalem and suffer many things at the hands of the elders, the chief priests and the teachers of the law, and that He must be killed and on the third day be raised to life.

Peter took Him aside and began to rebuke Him. "Never, Lord!" he said. "This shall never happen to you!" Jesus turned and said to Peter, "Get behind Me, Satan! You are a stumbling block to Me; you do not have in mind the concerns of God, but merely human concerns."

Then Jesus said to His disciples, "Whoever wants to be My disciple must deny themselves and take up their cross and follow Me. For whoever wants to save their life will lose it, but whoever loses their life for Me will find it. What good will it be for someone to gain the whole world, yet forfeit their soul? Or what can anyone give in exchange for their soul? For the Son of Man is going to come in His Father's glory with His angels, and then He will reward each person according to what they have done. "Truly I tell you, some who are standing here will not taste death before they see the Son of Man coming in His kingdom."